



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ  
Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Մ Է  
2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ  
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

Մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվում են **առցանց՝ 2021 թվականի մայիսի 24-ից մինչև հունիսի 30-ը, ժամը 17<sup>00</sup>-ն ներառյալ:**

Ընդունելության քննություններն անցկացվում են 2021 թվականի **հուլիսի 1-4-ը ներառյալ:**

**Ընդունելության մրցույթին կարող են մասնակցել առնվազն բակալավրի աստիճան ունեցող անձինք** (մանրամասները տե՛ս ՀՀ պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի 30-32-րդ կետերում, հղումը՝ <https://paara.am/home/dimord/yndunelutyun/> ) :

h/h	Մասնագիտություններ և կրթական ծրագրեր	Ուսուցման ձև (անվճար, վճարովի)	Տարեկան ուսման վճարը (ՀՀ դրամ)	Թ Ե Ս Տ (Անցկացվում է Ակադեմիայում՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ)	ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ (Առցանց կամ Ակադեմիայում՝ կախված համավարակային իրավիճակից)
1.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b> <i>Կրթական ծրագրերը</i>				Ստուգվում են ընդհանուր զարգացածությունը, գրավոր և բանավոր խոսքի մշակույթը, օտար լեզվի իմացությունը և ընդհանուր բազմագիտակությունը (երուղիցիա)
1.1	Հանրային կառավարում	անվճար և վճարովի	600 000	ՀՀ Սահմանադրություն և ՀՀ սահմանադրական իրավունք	
1.2	Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	անվճար և վճարովի	600 000	ՀՀ Սահմանադրություն և ՀՀ սահմանադրական իրավունք	
1.3	Հանրային ֆինանսների կառավարում <sup>1</sup>	անվճար և վճարովի	500 000	ՀՀ Սահմանադրություն և Տնտեսագիտության տեսություն	
1.4	Զբոսաշրջության կառավարում (երեկոյան ուսուցում)	անվճար և վճարովի	500 000	ՀՀ Սահմանադրություն և ՀՀ սահմանադրական իրավունք	
1.5	Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA) (երեկոյան ուսուցում)	վճարովի	650 000	—	
1.6	Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA) (հեռավար ուսուցում)	վճարովի	550 000	—	
1.7	Մարդկային ռեսուրսների կառավարում (երեկոյան ուսուցում)	վճարովի	600 000	—	
2.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍՆԵՐ</b> <i>Կրթական ծրագիրը</i>				
2.1	Ապահովագրական գործ (երեկոյան ուսուցում)	վճարովի	500 000	—	
3.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b> <i>Կրթական ծրագիրը</i>				
3.1	Իրավագիտություն <sup>2</sup>	անվճար և վճարովի	700 000	ՀՀ սահմանադրական իրավունք և ՀՀ քաղաքացիական իրավունք	
4.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b> <i>Կրթական ծրագրերը</i>				
4.1	Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն	անվճար և վճարովի	450 000	ՀՀ Սահմանադրություն և Քաղաքագիտություն	
4.2	Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն	անվճար և վճարովի	450 000		
4.3	Քաղաքական ժողովախոսքի և PR տեխնոլոգիաներ	վճարովի	450 000		
5.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b> <i>Կրթական ծրագիրը</i>				
5.1	Կառավարման հոգեբանություն	անվճար և վճարովի	450 000	ՀՀ Սահմանադրություն և Ընդհանուր հոգեբանություն	

<sup>1</sup>«Հանրային ֆինանսների կառավարում» կրթական ծրագրով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել տնտեսագիտություն, կառավարում, ճարտարագիտություն, ինչպես նաև ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտություններ ունեցող շրջանավարտները:

<sup>2</sup> «Իրավագիտություն» կրթական ծրագրով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել իրավագիտություն, միջազգային հարաբերություններ մասնագիտություններ ունեցող շրջանավարտները, «Հանրային կառավարում» և «Կառավարում» որակավորման աստիճան ունեցող շրջանավարտները, ինչպես նաև այն դիմորդները, որոնց դիպլոմի հավելվածում (միջուկում) երկու և ավելի իրավագիտական առարկա է նշված:

Ուսման տևողությունը 2 տարի է բոլոր կրթական ծրագրերի համար:

**2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ**

Կրթական ծրագիրը	Ընդամենը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)	Վճարովի
Հանրային կառավարում	50	9	41
Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	50	6	44
Հանրային ֆինանսների կառավարում	25	4	21
Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA)	75	0	75
Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA) <b>հեռավար ուսուցում</b>	60	0	60
Մարդկային ռեսուրսների կառավարում	60	0	60
Զբոսաշրջության կառավարում	50	2	48
Ապահովագրական գործ	12	0	12
Իրավագիտություն	48	8	40
Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն	20	4	16
Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն	30	4	26
Քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ	15	0	15
Կառավարման հոգեբանություն	25	4	21
<b>Ընդամենը</b>	<b>520</b>	<b>41</b>	<b>479</b>

Յուրաքանչյուր դիմորդ կարող է դիմել միայն մեկ անվճար կրթական ծրագրում սովորելու համար: Զուգահեռաբար երկրորդ մասնագիտությամբ սովորելու համար դիմորդը կարող է դիմել նաև «Գործարար վարչարարություն» (երեկոյան կամ հեռավար՝ MOODLE համակարգով), «Մարդկային ռեսուրսների կառավարում» և «Ապահովագրական գործ» (երեկոյան ուսուցմամբ) կրթական ծրագրերով ուսանելու համար:

Յուրաքանչյուր կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվը 10-ն է (տե՛ս ՀՀ պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ, կետ 49):

**Ընդունելության համար պետք է վերբեռնել (upload) հետևյալ փաստաթղթերը (պարտադիր պայման է՝ բոլոր փաստաթղթերը լրացնել հայատառ և վերբեռնել PDF ձևաչափով, լուսանկարը՝ jpg).**

➤ դիպլոմը և դրա հավելվածը (միջուկը) (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ նաև փաստաթուղթ իրենց կրթության համարժեքության մասին **Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից**, հասցե՝ Երևան, Ամիրյան փող. 27, <http://armenic.am/>, էլ. կապ՝ [info@armenic.am](mailto:info@armenic.am), հեռ.՝ + 374 10 53 09 04):

**Եթե դիպլոմները դեռևս չեն հանձնվել, ապա դիպլոմի փոխարեն պետք է վերբեռնել տեղեկանք՝ ըստ ներկայացված ձևանմուշի** (տե՛ս <https://paara.am/home/dimord/yndunelutyun/> հղումը), իսկ դիպլոմի հավելվածի փոխարեն՝ **ակադեմիական տեղեկագիր** Ձեր բուհից, որտեղ պետք է **պարտադիր նշված լինի ամփոփիչ ՄՈԳ-ը** (միջին որակական գնահատականը),

➤ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի,

➤ հրատարակված կամ հրատարակման տրված գիտական աշխատությունների ցուցակը (դրանց առկայության դեպքում),

➤ անձը հաստատող փաստաթուղթ (<< քաղաքացիների համար՝ անձնագիր, նույնականացման քարտ, << ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական): Անձնագրի դեպքում նաև սոցիալական քարտ:

➤ արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկը կամ ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականը (լուսապատճենահանվում են բոլոր այն էջերը, որտեղ **գրառումներ** կան),

➤ ընդունելության ծառայությունների համար սահմանված գումարի վճարի անդորրագիրը: Ընդունելության գործընթացի կազմակերպման համար դիմորդները վճարում են 3000 << դրամ, որը, անկախ քննության արդյունքից, չի վերադարձվում:

**Վճարման կարգը՝**

«<< պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ

<< ՖՆ գործառնական վարչություն, Երևանի թիվ 1 ՏԳԲ

</< 900018005646

<<<< 00035088

Նպատակի դաշտում նշել **դիմորդի անունը, ազգանունը, հայրանունը, «Ընդունելություն»**

**Վճարումը կատարելուց հետո անհրաժեշտ է լուսապատճենել անդորրագիրը և վերբեռնել:**

Համաձայն << **պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի** 47-րդ կետի՝ մինչև հրամանագրելը «Ակադեմիան մրցույթը հաղթահարած դիմորդի հետ կնքում է պայմանագիր...»:

Պայմանագիրը կնքելիս դիմորդը ներկայանում է անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով, ներկայացնելով վերը նշված փաստաթղթերի պատճենները **բնօրինակների հետ** (պատճենները համեմատվում են բնօրինակների հետ և ընդունվում, իսկ բնօրինակները վերադարձվում են քաղաքացուն):

Պետք է ներկայացնել նաև 4 լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի:

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել**  
**<< պետական կառավարման ակադեմիայի ընդունող հանձնաժողով**  
**(հեռախոսահամարները և հղումները դրված են «Դիմորդ» հարթակում):**  
[www.paara.am](http://www.paara.am)

**Հեռակա ուսուցման** դիմորդների փաստաթղթերը կընդունվեն սեպտեմբերի 15-ից, որի մասին մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի լրացուցիչ: